ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հեքիաթի ուսուցման դերն ու նշանակությունը տարրական դպրոցում

Կատարող՝ Հակոբյա Ալմարա

/անուն, ազգանուն, հայրանուն /

«Մուսայելյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, դասվար

/դպրոց, մասնագիտություն, ըստ վերապատրաստման խմբի/

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

/անուն, ազգանուն/

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Հեքիաթի ուսուցման դերն ու նշանակությունը տարրական դպրոցում……..……..4

Եզրակացություն…….…...…18

Գրականության ցանկ……..……19

Ներածություն

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են: Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական արժեքավոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Սովորողների բարոյական որակների ձևավորման գործում մեծ դեր ունի հեքիաթը, որի ուսուցումն առավել դրական ազդեցություն է թողնում տարրական դասարաններում:Հեքիաթի ներգործական արդյունավետությունն այդ առումով հետաքրքրել է ոչ միայն մանկավարժներին, այլ հոգեբաններին: Հոգեբանական հեքիաթների թերապիան /сказкотерапия/որպես ինքնուրույն ուղղություն անմիջապես մեծ ճանաչում է ստացել:Ներկայումն լայն ընդունելություն է գտել Տ.Դ. Զինկևիչ-Եվստիգնեևի առաջարկած տեսականին, որն իր մեջ ներառում է և՛ գեղարվեստական/ժողովրդական և հեղինակային/, և՛ հոգեբանական թերապևտիկ հեքիաթներ:

Հեքիաթը բացահայտում է սովորողների ներքին հնարավորությունները, զարգացնում նրանց ստեղծագործական կարողությունները և միաժամանակ դաստիարակչական հսկայական խնդիրներ վերհանում ու լուծման մեխանիզմներ առաջարկում: Երեխան հենց հեքիաթի մեջ է հեքիաթ տեսնում, նրա միջոցով ենք մենք ճանաչում երեխային որպես անհատականություն: Հեքիաթում առավել ընդգծված ձևով է դրսևորվում նրանց դերասանական տաղանդը, ստեղծագործելու ունակություններն ու խոսքի վարպետությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել հեքիաթի դերն ու նշանակությունը կրտսեր դպրոցականի բարոյական արժեքների ձևավորման գործում:

Աշխատանքի խնդիրներն են՝

1.Պարզել հեքիաթի կրթադաստիարակչական նշանակությունը:

2.Ներկայացնել հեքիաթի դասավանդման մեթոդական շղթան:

Հեքիաթի ուսուցման դերն ու նշանակությունը տարրական դպրոցում

Հեքիաթն այնպիսի իրական հայելի է, որի մեջ ամեն մեկն իր պատկերն է տեսնում:

Դարեր շարունակ տարբեր ազգեր և ժողովուրդներ հեքիաթի միջոցով են սերնդեսերունդ փոխանցել աշխարհի վերաբերյալ իրենց պատկերացումները, բարքերը, սովորույթները, բարոյական նորմերը և արժեքային համակարգերը: Հեքիաթն այն հզոր միջոցն է, որը կապ է ապահովում տարբեր ժամանակահատվածներում ապրած մարդկանց միջև: Այսօր նույնպես հեքիաթը պահպանում է իր ազդեցության ուժը: Հեքիաթը հատկապես հետաքրքրական է կրտսեր դպրոցականների հետ աշխատանքում: Այն՝ մշակվելով որպես մանկավարժական տեխնոլոգիա, կարող է նպաստել կրտսեր դպրոցականների ուսումնական դժվարություններին, երեխայի անձի զարգացմանն առնչվող մի շարք խնդիրների լուծմանը, ինչպես նաև միջանձնային հողարդակցման խոչընդոտների հաղթահարման ու հաղորդակցական ունակությունների ձևավորմանը:

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ դրանք արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Հեքիաթը միաժամանակ տեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Մեծ է առհասարակ հեքիաթների, այդ թվում նաև հայկական հեքիաթների, ինչպես դաստիարակչական, այնպես էլ պատմաճանաչողական և գրական - գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Հեքիաթները ժողովրդի համար միայն Հաճելի ժամանցի առարկա չեն եղեի որոնցով նա կարճել է ձմռան երկար ու ձանձրալի գիշերները, փարատել ցերեկվա ծանր առօրյայի ճնշիչ տպավորությունը:

Նրանք կատարել են Հասարակական լայն զանգվածների լավագույն ձգտումների ու իղձերի յուրահատուկ հաղորդիչի դերը, ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ: Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որ մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած անլուր տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ:

Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության, անվեհերության, խելքի ու հնարամտության հիանալի օրինակներով, դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով, արդարությունը պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու անձնազոհ պատրաստակամ ութ յամ բ, ջանադիր աշխատասիրությամբ, հավատարմությամբ և անձնազոհությամբ: Ժողովրդական բանահյուսության մյուս մանրերի հետ միասին, հեքիաթները շնորհակալ ու հարուստ նյութ են տալիս ժողովրդի հոգեբանությունը, նրա իղձերն ու ակնկալությունները, նրա բուն պատմությունը ուսումնասիրելու համար: Գալով խոր հնադարից, հեքիաթների լավագույն նմուշները այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքն ու ուժը և գեղարվեստական մեծ բավականություն են պատճառում մարդկանց: Նրանք ունեն յուրահատուկ «անհասանելի նորմայի» նշանակություն, այնքանով, որքանով որ բանաստեղծական բարձր ձևերի մեջ կերպավորում են ժողովրդի դարավոր մտքերն ու զգացմունքները, մարդկության (անկրկնելի մանկությունը):

Հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի: Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում: Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը:

Հեքիաթը երեխայի առաջին շփումն ու պատկերացումն է իր շրջապատող աշխարհի ու մարդկանց, երևույթների, բնության հանդեպ, հեքիաթներում է նա տեսնում ու լսում չարի ու բարու, պայքարի, հաղթանակի մասին, լսում է գեղեցիկի ու տգեղի մասին, սկսում տարբերակել լավն ու վատը, երևակայություն է զարգացնում:

Ու հենց այստեղ էլ ձևավորվում է երեխան որպես անհատ ու ձևավորվում են նրա հայացքներն ամեն ինչի հանդեպ: Բոլորիս մանկությունից մինչև ծերություն ուղեկցում են հեքիաթները: Սկզբում հեքիաթում ենք կարդում, հետո արդեն իրական կյանքում փնտրում գտնում Քաջ Նազարին, Փանոսին, Հուռուն, Անխելք մարդուն և այսպես շարունակ:

Ցավոք մեր օրերում ծնողները այդքան էլ չեն կարևորում հեքիաթների դերը և իրենց փոքրիկների համար հեքիաթներ չեն կարդում,իսկ հետագայում այդ բացը դրսևորվում է երեխայի վարքագծում:

Հեքիաթն իրականացնում է նաև՝ կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների կարևորագույն որակների ձևավորման գործառույթները: Առաջին հերթին՝ հեքիաթը հեշտացնում է սուբյեկտների միջև փոխհարաբերությունների համակարգի գիտակցումը և նվազեցնում է բացասական տպավորությունների ազդեցությունը հնարավոր հիվանդագին ինֆորմացիա ստանալու դեպքում: Երկրորդ՝ հեքիաթի լեզուն, լինելով մարդկային փոխհարաբերությունների հիմնական լեզուներից մեկը և միաժամանակ արվեստի հիմնական միջոց, ապահովում է ստեղծագործական կարողությունների բացահայտումը: Երրորդ՝ հեքիաթի միջոցով սեփական պատկերացումների արտահայտումը նպաստում է աշակերտի ինքնագիտակցության զարգացմանը: Չորրորդ՝ հեքիաթը դառնում է կապող օղակ ուսուցչի և աշակերտի միջև:

Հեքիաթը երեխային օգնում է խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր և հանդիսավոր երևույթները, գաղտնի, առեղծվածային ուժերը և ներմուծել դրանք երկրային իրական կյանք: Հեքիաթի միջոցով երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերն այս աշխարհում: Նա պետք է ուղղորդի երեխային՝ մտքի և հոգու ճանապարհով:

Շփվելով գրողների և բանաստեղծների հետ, ծանոթանալով ստեղծագործություններին, ընթերցողը առավել է հասկանում իր կարդացածը, իսկ սերը դեպի ընթերցանություն զարգանում է դեռ վաղ հասակից: Ինչպե՞ս ուսուցանել, որ երեխաները սիրեն կարդալ: Ինչպե՞ս սովորեցնել երեխաներին մտածել և տրամաբանել: Այս հարցերի պատասխանները կլինեն այն ժամանակ, երբ երեխան

կապրի հերոսի կյանքով, հանդես կգա հերոսի դերով, կխոսի, կմտածի ինչպես նա: Ամեն ուսուցիչ երազում է ունենալ մտածող, արձագանքող, ուշադիր երեխաներ:

Հեքիաթները գրավում են երեխաներին իրենց անսահմանափակ հնարավորություններով, բարձր բարոյականությամբ, լավատեսությամբ, արդարության զգացողությամբ և ամենակարևորը բարու հաղթանակով ընդդեմ չարի: Հաճախ երեխան ոչ միայն ընդունում և լսում է հեքիաթը, այլև ինքնէ ստեղծում այն և ապրում իր ստեղծած հեքիաթում: Մանկության տարիներին բոլորն էլ լսում են հեքիաթներ, հաճախ առանձնացնում իրենց համար սիրելի հեքիաթների հերոսներին, ըմբռնում են բարու և չարի հասկացողությունները:

Հեքիաթի մասին գիտելիքների ճանաչումը նպաստում է երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանն ու զարգացմանը: Կրտսեր տարիքում ուսուցման նպատակը երեխաներին այնպիսի կարողություններով ու հմտություններով զինելն է, որոնք կնպաստեն նրանց ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելուն:

Տարբեր մարդիկ տարբեր մտավոր կարողությունների տեր են, որոշների մոտ այն բավական լավ զարգացած է, իսկ ոմանց մոտ ավելի թույլ, սակայն բոլորի մոտ էլ հնարավոր է գտնել այն ուղին, որը կկարողանա նրանց տանել բարձունքներ: Պետք է ուսուցումն այնպես կազմակերպել, որ հեքիաթների ընթերցումը դառնա նոր ձեռքբերումների գործընթաց: Երեխաների մոտ տեղի է ունենում մտավոր կարողությունների զարգացում, որը նպաստում է հեքիաթների նյութի ամբողջական ընկալմանը, ինչպես նաև այն տարբեր կողմերից դիտարկելու և վերլուծահամադրական աշխատանքներ իրականացնելու հմտությունները: Կրտսեր տարիքում հեքիաթների մասին նախագիտելիքներ հաղորդելը նախապատրաստում է հետագա ուսուցման ընթացքում խորացնելու իրենց գիտելիքներն այդ ուղղությամբ և պատրաստ լինելու նոր գրական ստեղծագործությունների՝ (վեպ, վիպակ, նորավեպ, գազել, սոնետ, տրիոլետ, կատակերգություն, դրամա) ուսումնասիրության համար:

Հեքիաթն այն ստեղծագործությունն է, որը կարելի է կարդալ դերերով և բեմականացնել: Սա մեծ բավականություն է պատճառում երեխաներին, սակայն դերերով կարդալուց առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն, հերոսների բնավորությունների առանձնահատկությունների

քննարկում, նրանց կոնկրետ դեպքերում դրսևորած վարքի դիտարկում, ընտրովի ընթերցանություն: Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը: Երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը: Առավել ևս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին: Հեքիաթ պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի կամ աշակերտների <<կազմած>> նկարներով պլանը: սա պատմելու ուսուցման առաջին փուլն է: Հեքիաթի վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով, դերերով, մրցութային և այլ եղանակներով: Պետք է հանձնարարել, որ երեխաներն անգիր սովորեն այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանեն դրանք:

Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր: Ձևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:

Երեխաներն ընդհանրապես իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները հենց նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը: Երեխաները հեքիաթների միջոցով պատկերավոր են ընկալում նաև չարն ու բարին: Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային կօգնի հաղթահարել կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը:

Նույն հեքիաթը երեխային կարելի է մի քանի անգամ պատմել, որպեսզի նաև լավ ընկալի հեքիաթի բուն ասելիքը:

Հեքիաթները բաժանվում են տեսակների և ենթատեսակների: Տարածված են հրաշապատում կամ կախարդական, իրապատում, կենդանական, արկածային, հերոսական-պատմական, կենցաղային-առօրեական հեքիաթները:

Հրաշապատում հեքիաթներում պատկերվում է բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի՝ դևերի, կախարդների, վհուկների, վիշապների դեմ: Դեպքերը տեղի են ունենում ստորերկրյա թագավորությունում, երևակայական աշխարհներում, որտեղ անհավատալին դառնում է իրական: Հերոսներին օգնում են

ձին, թռչունը, բարի պառավը կամ իմաստուն ծերունին: Հեքիաթներում չարի և բարու պայքարը մեծ մասամբ ավարտվում է բարու հաղթանակով:

Իրապատում հեքիաթներն արտացոլում են ժողովրդի կյանքը, մարդկային վսեմ ձգտումները, հալածվածների և ճնշվածների ճակատագիրը, ծաղրվում են ժողովրդին կեղեքողները, մարդկային զանազան արատներ:

Կենդանական հեքիաթներում անձնավորվում են տարբեր կենդանիներ, պատկերվում են նրանց առանձին հատկություններն ու վարքը: Կենդանիների (օրինակ՝ գայլի, աղվեսի, արջի, կկվի, բվի, օձի, առյուծի և այլն) միջոցով այլաբանորեն ներկայացվում են մարդկային որոշակի հատկանիշներ՝ ինչպես չարությունը, խորամանկությունը, նախանձը, ագահությունը, ժլատությունը, մեծամտությունը, այնպես էլ բարությունը, անձնազոհությունը, վեհանձնությունը, ազնվությունը, հավատարմությունը, իմաստնությունը և այլն:

Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Հեքիաթներում հաճախ են իրար խառնվում իրականն ու երևակայականը:

Ժողովրդական հեքիաթները բարձրացնում են երեխայի ճանաչողականությունը, ձևավորում են հոգևոր և բարոյական հայացքները: Հեքիաթի դերը երեխաների զարգացման գործում բազմազան է՝ սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը երեխաներին կյանք սովորեցնելու, չարի ու բարու մասին պատմել ու ամենամատչելի տարբերակն է: Երեխաները ավելի հեշտեն ընկալում հեքիաթը, քան մեծահասակների դաստիարակչական քարոզները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխաները, ում փոքր հասակից հեքիաթներ են պատմել, ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ և սահուն արտահայտել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի զգացմունքային և պատկերավոր:

Հեքիաթները հիմնականում արձակ են, հազվադեպ՝ նաև չափածո: Դրանց մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը՝ «Լինում է, չի լինում», «Կար, չկար», «Ժուկով-ժամանակով», «Չգիտեմ՝ որ երկրում, որ թագավորությունում», ինչպես նաև նույն վերջաբանը՝ «Երկնքից երեք խնձոր է ընկնում...», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին» և այլն:

Աշխարհի ժողովուրդների հեքիաթների շարքում իրենց տեղն ունեն նաև հայկական ժողովրդական հեքիաթները, որոնք նույնպես վաղնջական ժամանակների ծնունդ են. բանասացների շնորհիվ փոխանցվել են մեզ՝ որպես զարմանալի, անգին ավանդներ: Հայ բանահավաքներն ու բանագետները գրառել և կորստից փրկել են դրանք: Հայկական հեքիաթների հավաքման ու հրատարակման աշխատանքներին մեծապես նպաստել են Գարեգին Սրվանձտյանցը, Սարգիս Հայկունին, Տիգրան Նավասարդյանը, Երվանդ Լալայանը, Սահակ Մովսիսյանը (Բենսե) և ուրիշներ:

Հրատարակվել են բազմաթիվ ժողովածուներ, որոնցից հատկապես արժեքավոր է «Հայ ժողովրդական հեքիաթների» բազմահատորյակը (1958–85 թթ.): Յուրաքանչյուր տարածաշրջան ունի իր հեքիաթները, որոնք հաճախ նույն հեքիաթների տեղային տարբերակներն են: Ուշագրավ է նաև 1980 թ-ին լույս տեսած «Արև հեքիաթ» ժողովածուն, որտեղ զետեղված են մի շարք հեքիաթներ՝ ասմունքող Սուրեն Քոչարյանի մշակմամբ:

1981 թ-ին լույս է տեսել «Հրեղեն ձին» ժողովածուն, որտեղ ընդգրկված են հարյուրավոր հեքիաթներ, խաղիկներ, հանելուկներ, առածներ և ասացվածքներ. իրենց պապիկներից ու տատիկներից, ուրիշ տարեցներից լսելով ու գրառելով՝ դրանք «Պիոներ կանչ» (այժմ՝ «Կանչ») թերթին էին ուղարկել Հայաստանի տարբեր շրջաններից, Այսրկովկասի հայաշատ վայրերից՝ 2–10-րդ դասարանների աշակերտները: Կուտակված նյութն այնքան առատ էր, որ 2003 թ-ին լույս է տեսել նույն ժողովածուի երկրորդ գիրքը՝ «Թագավորի երազները» խորագրով (հավաքող՝ Սերգեյ Վարդանյան):

Աշխարհի լավագույն հեքիաթագիրներից են՝ գերմանական գրականության մեջ՝ Գրիմ եղբայրները («Հենզելն ու Գրետելը»), ֆրանսիականում՝ Շառլ Պերոն («Մոխրոտիկը»), ռուսականում՝ Ալեքսանդր Պուշկինը («Ոսկե ձկնիկը»), Նիկոլայ Նոսովը («Անգետիկի արկածները»), Պավել Բաժովը («Մալաքիտե զարդատուփ»), Յուրի Օլեշան («Երեք հաստլիկներ»), դանիականում՝ Հանս Քրիստիան Անդերսենը («Ջրահարսը»), շվեդականում՝ Աստրիդ Լինդգրենը («Փոքրիկն ու տանիքում ապրող Կառլսոնը»), իտալականում՝ Ջանի Ռոդարին («Չիպոլինոյի արկածները»), անգլո-ամերիկյանում՝ Ռեդյարդ Կիպլինգը («Ջունգլիների գիրքը. Մաուգլի»), Օսկար Ուայլդը («Եսասեր հսկան»), Ռոուել Թոլքիենը («Մատանիների տիրակալը»), հայ

գրականության մեջ՝ Հովհաննես Թումանյանը («Կոնատ աղջիկը», «Չախչախ թագավորը»), Ղազարոս Աղայանը («Անահիտ», «Զանգի-զրանգի») և ուրիշներ:

Ե՛վ հայկական ժողովրդական, և՛ աշխարհի ժողովուրդների հեքիաթները մշտապես գրավել են Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի, Խնկո Ապոր, Հայրապետ Հայրապետյանի և այլ գրողների ուշադրությունը, որոնք իրենց գրած, մշակած ու փոխադրած հեքիաթներով հայ գեղարվեստական գրականությունը հարստացրել են նոր, ինքնատիպ ստեղծագործություններով:

Հեքիաթի ուսուցումը կրտսեր դպրոցում խիստ կարևոր է նաև այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է, ուստիև նրան հասու են բոլոր հեքիաթային, երկնային ու երկրային գանձերը: Երեխան հավատում է հրաշքին:

Մայրենի լեզվի ընթերցարաններում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ: Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը, Ստ. Լիսիցյանը, Ստ. Զորյանը, Մ. Կորյունը և ուրիշներ, որոնց մշակած գեղեցիկ հեքիաթները մեր դասագրքերի զարդն են: Հեքիաթի դասավանդումը իրականացվում է չորս քայլով.

1/ հեքիաթի ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,

2/հեքիաթի երևակայական կողմի բացահայտում,

3/հեքիաթի բարոյախոսական իմաստի /դաստիարակչական արժեքի/ վերհանում

4/հեքիաթի լեզվի և ոճի վերլուծություն

Տարրական դասարաններում հեքիաթը ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

Հեքիաթն այն ստեղծագործությունն է, որը կարելի է կարդալ դերերով և բեմականացնել: Սա մեծ բավականություն է պատճառում երեխաներին, սակայն դերերով կարդալուց առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն, հերոսների բնավորությունների առանձնահատկությունների

քննարկում, նրանց կոնկրետ դեպքերում դրսևորած վարքի դիտարկում, ընտրովի ընթերցանություն: Այս ամենից հետո նոր կարելի է անցնել հեքիաթի բեմականացմանը: Երեխաներին անչափ դուր է գալիս հեքիաթը ստեղծագործելով, փոփոխելով պատմելը: Առավել ևս օգտակար է հեքիաթին շարունակություն հյուսելը, որը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև երևակայության թռիչքին: Հեքիաթ պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի կամ աշակերտների <<կազմած>> նկարներով պլանը: սա պատմելու ուսուցման առաջին փուլն է: Հեքիաթի վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով. Խմբերով, դերերով, մրցութային և այլ եղանակներով: Պետք է հանձնարարել, որ երեխաներն անգիր սովորեն այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանեն դրանք:

Հեքիաթի ուսումնասիրման դասի մեթոդական շղթան.

.նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ,

.հեքիաթի ամբողջական ընթերցում,

.հեքիաթի ընթերցում մտքում/աշակերտների կողմից/

.բարձրաձայն ընթերցանություն/կարդում են աշակերտները/՝ մեկնաբանություններով

.բառային աշխատանք

.բնագրի ընթերցում՝ արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորման նպատակով,

.աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենտատեքստի կռահման ուղղությամբ,

.պատմելու նախապատրաստում, պատմում

.ամփոփում:

<<Թող ուրիշն անի>> չինական հեքիաթի ուսուցումը չորրորդ դասարանում

Դասի թեման՝ <<Թող ուրիշն անի>>

Նպատակը՝ Աշակերտները.

- կընթերցեն բնագիրը՝ պահպանելով կարդալու որակական հատկանիշները.
- Կթվարկեն հերոսներին բնութագրող բառերը և դրանք կհաստատեն ստեղծագործական փաստերով.
- կամրապնդեն միմյանց հետ հաղորդակցվելու կարողությունները
- կսովորեն լինել աշխատասեր, հարգել աշխատանքը, հույսը չդնել ուրիշների վրա.

Ընթացքը

Քանի որ երեխաները գիտեն թե ինչ հեքիաթ է, այդ իսկ պատճառով դասը կսկսենք օգտագործելով մտագրոհ մեթոդը: Մտագրոհի միջոցով կվերհիշեն հեքիաթի բովանդակությունը: Դասարանին կուղենք հետևյալ հարցերը

.<<Երեխաներ, ինչ է հեքիաթը? Երեխաներ հեքիաթները քանի տեսակի են լինում, Ըստ ստեղծագործողների հեքիաթները լինում են… թույլ ենք տալիս որ երեխաները շարունակեն: Հարցնում ենք թե յուրաքանչյուր հեքիարի հերոսները ովքեր կարող են լինել:

Դասը կանցկացնենք ԽԻԿ համակարգով

Առաջին փուլ-Խթանում

Գրատախտակին գրել ***ալարի, ով, դալարի, ոչ*** բառերը և առաջարկել աշակերտներին վերականգնել առածը: Երեխաներից մեկին կհրավիրենք գրատախտակի մոտ, և կլսենք իր տարբերակը, գրել կտանք գրատախտակին և աշակերտներին կհանձնարարենք մտորել առածի շուրջ: Կլսենք մի քանի աշակերտների կարծիք և կգանք ընդհանուր եզրակացության: Վեր կհանենք առածի հիմնական բովանդակությունը:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Քանի որ հեքիաթը ծուլության մասին է և նրանք այս տարի ուսումնասիրել են նաև <<Ճպուռն ու մրջյունը>> առակը, կարելի է վերհիշել առակը, հեղինակին, ինչպես նաև բարոյախոսությունը: Ըստ այդմ էլ երեխաներին կուղենք հարցեր և կլսենք նրանց պատասխանները, Հարցերը հետևյալն են.

1.Երեխաներ հիշում եք մենք ինչ ստեղծագործություն ենք ուսումնասիերել, որտեղ առնչվել ենք աշխատասիրության և ծուլության հետ: Կսպասեն մինչև տրվի ճիշտ պատասխանը: Այնուհետև կտանք այլ հարցեր:

2.Ինչպիսի ստեղծագործություն է <<Ճպուռն ու մրջյունը>>?

3.Ով է այս առակի հեղինակը?

4.Առակի որ մասում է գտնվում բարոյախոսությունը? Այնուհետև կառաջարկենք անգիր ասել այդ հատվածը:

Դրանից հետո աշակերտների միջոցով կվերհիշենք ինչպես նաև կսովորենք նոր առածներ ու ասացվածքներ աշխատանքի ու աշխատասիրության վերաբերյալ: Եվ գրի կառնեն իրենց <<Հրաշք տետր>>-ում:

1Ով աշխատի՝ նա կուտի:

2.Աշխատանքը մայրն է ամեն բարիքի:

3.Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն:

4.Աշխատող խոփը կփայլի:

5.Աշխատողը մինչև կեսօր է սոված, չաշխատողը՝ մինչև գիշեր:

6.Աշխարհն աշխատավորինն է:

Այնուհետև կլսենք աշակերտներից մի քանիսի մեկնաբանությունները և կառաջարկենք նրանց բացել դասագրքերն ու կարդալ հղումը. <<Պարզվում է յոթ

սարից, յոթ ձորից այն կողմ, ոչ բոլորը գիտեն այս առածը>>: Իսկ թե ինչ կիմանանք եթե կարդանք <<Թող ուրիշն անի չինական հեքիաթը>>:

Առաջին փուլին կհատկացնենք 10 րոպե ժամանակ:

Երկրորդ փուլ - Իմաստի ընկալում

-Դասանյութը բաժանել 2 մասի և առաջարկել ընթերցել <<Իսկ սառնամանիքը գնալով սաստկանում է>> նախադասությունը ներառյալ:

-Հատվածն ընթերցելուց հետո դասարանն ուղղել հետևյալ հարցերը:

-Ինչ եք կարծում, ինչպես կվարվեն ճանապարհորդները:

Աշակերտները կանխատեսում են դեպքերի ընթացքը, հետո ընթերցում են մինչև վերջ՝ ուշադրություն դարձնելով իրենց կատարած ենթադրություններին և նկարագրված դեպքերին: Հատվածներով ընթերցելուց հետո ևս մեկ անգամ կկարդան հեքիաթը մմիմյանց շարունակելով, ցանկալի է լավ ընթեցողները կարդան: Այնուհետև կկատարենք բառային աշխատանք: Տեքստից դուրս կգրենք այն բառերն ու բառակապակցությունները, որոնք անծանոթ են, օրինակ

Ամայի-անբնակ, անմարդաբնակ, անշեն

Լքված-անտեսված, անուշադրության մատնված

Մրրիկ-փոթորիկ, հողմ, բուք

Տրված բառերը երեխաները կգրեն բացատրական բառարաններում:

Այնուհետև երեխաները կփորձեն նկարագրել գրքում պատկերված նկարները:

Տալիս ենք վերարտադրողական հարցեր պարզելու համար երեխաները ճիշտ են ընկալել հեքիաթը:

- Ինչ պատահեց ճամփորդներին:
- Տնակում ինչպես էր պահում նրանցից յուրաքանչյուրը:
- Ինչու է հեքիաթն այդպես ավարտվում:

Այնուհետև կկատարենք ընտրովի ընթերցանություն, տալիս ենք հարցը, երեխաները տեքստից գտնում են համապատասխան տողը և կարդում են: Ինչպես օրինակ.

-Կարդում եք այն հատվածը, որտեղ՝

- Ինչ ճանապարհով էին քայլում ճամփորդները, ինչ պատահեց:
- Տնակում ինչ էին ասում ճամփորդներից յուրաքանչյուրը:
- Գործ չանելու համար ինչ պատճառներ էին բերում նրանցից յուրաքանչյուրը:

Դրանից հետո աշակերտները որոշում են ճամփորդների տրամադրությունը բնագրի տարբեր հատվածներում: Օգտագործելով <<Խմբավորում>> մեթոդը աշակերտների հետ գրատախտակին կփորձենք բնութագրել ճամփորդներին:



Բառացանկում գրել հետևյալ բառերը.

Օրրան, բերրի, տարր, մրրիկ, անդորր, երրորդ, չորրոդ բառերը:

Երկրորդ փուլին կհատկացնենք 25 րոպե ժամանակ:

Երրորդ փուլ-Կշռադատում

Կատարում ենք առաջադրանք էջ 107.1

/Ինչ պատճառներ են բերում ճանապարհորդները գործ չանելու համար/:

Յուրաքանչյուր աշակերտ ընտրում է իր կարծիքով պատասխանի ճիշտ տարբերակը, հիմնավորում և ներկայացնում դասարանին: Կշռադատման փուլում կօգտվենք <<Հնգյակ>> մեթոդից: Երեխաների օգնությամբ գրատախտակին կբնութագրենք հեքիատի հիմնական միտքը: Ինչպես օրինակ

Աշխատանք

Հաճելի, դժվար

Զարգացնող, դաստիարակող, կրթող

Այն մեզ տալիս է օրվա հաց

Գործ:

Տնային աշխատանք հանձնարարում ենք տանը սահուն կարդալ, կատարել էջ 108 առաջադրանք 4, <<Հրաշք տետրում>> գրել առածներ աշխատասիրության մասին և սովորել անգիր:

Այս փուլին հատկացնում ենք 10 րոպե ժամանակ:

Եզրակացություն

Այսպիսով՝ հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Հեքիաթը միաժամանակ տեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Հեքիաթը մեծ դեր ունի երեխաների կյանքում. հեքիաթի միջոցով երեխաները տարբերում են բարու և չարի ընկալումը:

Հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի: Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում: Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը:

Չնայած տեխնոլոգիական առաջընթացին, որը հեքիաթը դարձնում է իրականություն, երեխաները ձգտում են կախարդանքի ու հրաշքի: Եվ դա զարմանալի չէ. Չէ՞ որ հեքիաթներն արթնացնում են երևակայությունը, դուռ են բացում դեպի անճանաչելին, միավորում են մարդկանց և, ի վերջո, զարդարում են կյանքը: Շատ կարևոր է ուսուցչի և աշակերտի միջև լինի դրական հաղորդակցություն և համագործակցություն: Քանի որ կրտսեր դպրոցականները 6-9 տարեկան մանուկներ են, հարկավոր է զգույշ լինել նրանց մանկության հետաքրքրությունների հետ և թույլ տալ, որ երեխան իր հոգու մաքրությամբ որքան հնարավոր է երկար ապրի հեքիաթային աշխարհում, որովհետև կյանքը, այնուամենայնիվ, լի է բազմաթիվ դժվարություններով:

Գրականության ցանկ

1. Ալեքսանյան Ա., «Հեքիաթ» տեխնոլոգիայի կիրառումը կրտսեր դպրոցում, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, 2009.1-2, էջ 14-21:
2. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակ-97, Երևան, 2009, 352 էջ;
3. Մարգարյան Ա., Հեքիաթի ուսուցման դերը տարրական դասարաններում, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, 2011.4, էջ 10-13:
4. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Լույս, Երևան, 1980, 562 էջ;
5. Հայկական հանրագիտարան,
6. https://impoqrik.am
7. http://www.encyclopedia.am
8. https://mocak.am